

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 2016-2017ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության նպատակով ԿԳ նախարարի հրամանով հաստատվել են «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգը», «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի անդամների առավելագույն թվաքանակը» և «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի անհատական կազմը»: ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը երկու անգամ հայտարարել է մրցույթ՝ 25.10.2016թ.-ին և 19.04.2016թ.-ին: Հասարակական խորհրդի կազմում ընդգրկված է 24 անդամ:

ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի առաջին նիստը տեղի է ունեցել 14.10.02016թ.-ին: 24 անդամից նիստին մասնակցել են 18-ը, ևս՝ 3 հրավիրյալ անձ: Նիստի օրակարգ՝

1. ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ, նախարար Լևոն Մկրտչյանի ողջույնի խոսք:

2. «ՀՀ կրթության զարգացման 2016-25 թթ. պետական ծրագրի» նախագծի ներկայացում /գեկուցող՝ ԿԳՆ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ Ռոբերտ Ստեփանյան/:

3. «ՀՀ կրթության զարգացման 2016-25 թթ. պետական ծրագրի» նախագծի քննարկում:

Նիստի արդյունքում ընդունվել է որոշում.

1. Ընդունել ի գիտություն զեկույցը:
2. Հավանություն տալ «ՀՀ կրթության զարգացման 2016-25 թթ. պետական ծրագրի» նախագծին:

ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի երկրորդ նիստը տեղի է ունեցել 14.02.2017թ.-ին: 24 անդամից նիստին մասնակցել են 22-ը, ևս՝ 8 հրավիրյալ անձ: Նիստի օրակարգ՝

1. ՀՀ Նախագահի հետ ԿԳ նախարարի հանդիպման ընթացքում բարձրացված հարցերի և ՀՀ կառավարության հանձնարարականների կատարման շրջանակում հանրակրթության ոլորտի զարգացման նորարարական ծրագրերի ներկայացում՝

- Գերազանցության կենտրոններ /Արարատյան բակալավրիատ/ /զեկուցող՝ Կրթության գերազանցության ազգային ծրագրի աշխատակազմի ղեկավար Նարեկ Մանուկյան/:
- Հեռավար ուսուցման գործընթաց /զեկուցող՝ ԿԳՆ հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության բաժնի պետ Սուսաննա Ազատյան/:
- Դպրոցներում ֆինանսական կրթության ներդրում /զեկուցող՝ ԿԳՆ հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ Սյուզաննա Մակյան/:

2. Հանրակրթության ոլորտի զարգացման նորարարական ծրագրերի քննարկում:

Նիստի արդյունքում ընդունվել է որոշում.

1. Ընդունել ի գիտություն զեկույցը:
2. Հավանություն տալ Գերազանցության կենտրոնների /Արարատյան բակալավրիատ/ ծրագրին:

ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհուրդը որոշում է կայացրել օրակարգով հաստատված երկու թեմաները տեղափոխել խորհրդի առաջիկա նիստերի օրակարգ:

ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի երրորդ նիստը տեղի է ունեցել 06.09.2017թ.-ին: 24 անդամից նիստին մասնակցել են 16-ը, ևս՝ 5 հրավիրյալ անձ: Նիստի օրակարգ՝

1. «Ուսուցիչ» նախաձեռնության ներկայացում /զեկուցող՝ ԿԳՆ հանրակրթության վարչության պետ Աշոտ Արշակյան/:

2. Հանրակրթության ոլորտի զարգացման ծրագրերի քննարկում:

Նիստի արդյունքում ընդունվել է որոշում.

1.Ընդունել ի գիտություն զեկույցը:

2.Հավանություն տալ «Ուսուցիչ» նախաձեռնությանը:

ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի չորրորդ նիստը տեղի է ունեցել 01.12.2017թ.-ին: 24 անդամից նիստին մասնակցել են 13-ը, ևս՝ 4 հրավիրյալ անձ: Նիստի օրակարգ՝

«Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում /զեկուցող՝ ԿԳՆ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ Ռոբերտ Ստեփանյան /

Նիստի արդյունքում ընդունվել է որոշում.

1. Ի գիտություն ընդունել զեկույցը;

2. Հաշվի առնելով հնչած առաջարկությունները՝ լրամշակել «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը:

ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի չորրորդ նիստը տեղի է ունեցել 26.12.2017թ.-ին: 24 անդամից նիստին մասնակցել են 13-ը, ևս՝ 4 հրավիրյալ անձ: Նիստի օրակարգ՝

«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում /զեկուցող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն և հետրուիական մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Սուքիասյան/:

Նիստի արդյունքում ընդունվել է որոշում.

1. Հավանություն տալ «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծին:
2. Օրինագծի մշակման և ընդունման հետագա փուլերում հաշվի առնել խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերն ու ներկայացված առաջարկությունները:

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգի՝ երկու տարին մեկ անգամ խորհրդի անդամների մեկ երրորդը ենթարկվում է ռոտացիայի, որի իրականացման նպատակով նախարարության պաշտոնական կայքէջում խորհրդի գործունեության 2 տարին լրանալուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, այսինքն՝ 2018 թվականի ապրիլի 26-ին խորհրդի նոր անդամների համալրման նպատակով կիրառարակվի համապատասխան հայտարարություն: